ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/8420-2023
«10» 05 2023թ

«ԷՅԲԻԷՖ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02851766)
(ՀՀ, ք. Երևան, Աբովյան 23, հեռ. 094277400)
էլ. փոստ՝ abf.llc@mail.ru

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ նաև՝ Գնորդ) և ***«ԷՅԲԻԷՖ» ՍՊԸ-ի*** (այսուհետ նաև՝ Վաճառող) միջև 18.01.2023 թվականին կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N **ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23** պետական գնման պայմանագիրն (այսուհետ նաև՝ Պայմանագիր), իսկ 09.03.2023 թվականին պայմանագրին կից կնքվել է **N1-51-23** համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), որի շրջանակներում Ընկերությունը մինչև 2023թ. ապրիլի 5-ը պետք է մատակարարեր 2 386 550 մլ. անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութեր, որոնք չի մատակարարել:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը միակողմանի լուծում է 18.01.2023 թվականին կնքված N **ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22-23/105-1-06-23 պետական գնման պայմանագիրը**, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառում է

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

Վաճառողի կողմից, որպես երաշխիք ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Վաճառողին սպասարկող բանկ՝ համապատասխանաբար 7 339 000 ՀՀ դրամ և 4 839 000 ՀՀ դրամ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN KAREN 6911740142

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝
Խորհրդական, Դավիթ Մհերյան
011597223